

պարպեցի : Բայց վարդանին աղաղակը չէր գաղրեր, ու երթաւով աւելի մօտէն կուզար ինձի.

— Դի՛ակս, Հարօ՛, դի՛ակս...

Անզամ մըն ալ զարձայ իրեն : Վարդան արինլուայ գետին վրայ կը թօթուրտար, իր կարմրած աշքերը ինելայնորէն ինձի սևուած : Մ'էկ կողմէն հրացանս լցնելով՝ իրեն ըսի.

— Այսամէ՛, հոգի՞ս, սպասէ՛ որ իս ալ զարնեն, շուտով՝ կը հասնիմ ետևէդ . . .

Բայց վարդան կը կրկնէր իր միակերպ աղաղակը, և անհնարին ճիզեր կ'ընէր հողին վրայ դէպի իս շարժելու :

Ալ չէր լսեր : Աչքերս կը մթնային վասոդին ծուխէն, ականջներս խուցեր էին հրացանածզութեան անվերջ որոտէն :

Յանկարծ զաղար առնել սփառուեցայ : — Վարդան իր արինաշաղախ մարմնու վը բաշկուուելէն բովս էր հասեր, և իր հողեվարքի կենսասպառ ձեռուլներովը թէս կը բռնէր : Հրացանս վարդի պահ մը, գրկեցի վարդանը, և իր շրմներուն սեղմեցի ջերմեանդ շրմներս : Բայց անհկա վեր առաւ զլովսը իմ գրկէս, և իրեն մացած վերջին ինեղուկ շոնչովը ինձի ըսաւ.

— Դի՛ակս, Հարօ՛ ջան, առջիդ բաշէ՛, պատնէշ ըլք դի՛ակս...

Աւ զլուխը գետին զարկաւ, անկենան :

Հրացանս անոր վրայ դրած կը կրակէի հիմաւ : Իմ պատնէշս էր ալ վարդանին դիակը, որուն կուզային մխուիլ ինձի սահմանուած գնատկները : Զիմ գիտեր զեռ որչափ ատեն տեղ ասիկաւ : Մ'էր միւս ընկերները մէկիկ մէկիկ զաղրեր էին կրակէւ, ու միւս մինակ մացիր պաշտելի պատնէշիս ետին, մինչև որ գիշերս իջաւ, կուրցուց ամէն բան, և թշնամին լուց վերջապէս :

Այն ատեն ոտքի ելայ, շալկեցի Վարդանի պատնէշ զիակը, ու անոր նուիրական բերին տակ՝ սպաւոր ու յաղթական՝ լեռն ի վեր վաղեցի, խաւարին մէջէն . . .

Սուրեն Պարրեկան

## ԵՂԲՈՐ ՏԵՂ

(Ե. ԳՈԼԵՏԱՆՈՎԱԿԱՅԵԱՆ — ՄԻԹԱՑԱՌՎԱԿԱՅԻ)

(Եար. Էջ 305)

Բ.

Շատ կարիքներ ու դարդեր էր բաշել խեղճ Մարիան մինչեւ այն սարսափելի զիշերը, որի հետ ես ծանօթացրի ընթերցողին :

Տամ վեց տարեկան հասակում նէ արդէն զրկւած ծնողներից իր տասներկուտ տարեկան եղագօր հետ՝ ստանում է իր ծնողներից իրը ժառանգութիւն մի հին խրճիթ, մի բանի ակօսամէջ հող, բայց այդբանն էլ մշակող չկար : Հեռու բարեկամները խօսքերով միայն մասնակից եղան նրանց վիճակը բարւուելու համար . խորհուրդ տուին խրճիթը փակել, վանինկին տալ ուսման, իսկ իրեն՝ Մարիային ծառայութիւն մտնել, որ և կատարեց նէ : Եղրօրը տարաւ Մուկվա և տեղ կօշկակարի մօտ, ինըը մտաւ ծառայութեան մի հարուստ գիւղացու մօտ :

Նէրա կենցաղակարութիւնը շատ վաս էր աղաների մօտ . նէրա վրայ էր ծանրանում դաշտային աշխատանքը, զեռ գիշերն էլ հանգստութիւն չունէր, տիրոջ մանուկն էր պահում, բայց և այնպէս նէ որոշել էր մնալ մի տեղ, մինչեւ որ վան՛կան մարդ կը գառնայ, սակայն վան՛կան չէր արդարացնում նէրա յոյսերը : Ծոյլ, կոպիտ, արատաւոր հակումներով, մի անգամ չէր փախել իր խօզեախնի մօտից, յետոյ սկսեց օղի խմել և այն ժամանակ, երբ կարող էր լաւ ոռնիկ ստանալ, խօզէնի (տիրոջ) մօտից բոլորովին հեռացաւ, և գալով լիպկէի այն գրութեան մէջ, որ մինչեւ անգամ համագիւղացիք երկար ժամանակ չէին կամենում ընդունել իրենց հասարակութեանից, ու ին տիրապետում էր նէրա հայրը, և մի

կերպ կարգի բերեց իր խեղճուկ տնտեսութիւնը:

Բնակութիւն հաստատեց իւանը իր հայրենի տան մէջ, և սկզբում, թւում էր թէ, գործի է ձեռնարկել: Մարիան հանգատացաւ, ուրախացաւ, սակայն նէրա ուրախութիւնը երկար չ'անեց: իւանը երկու, երեք օրով կորչում էր, և վերադառնում էր տուն առանց կօշիկի, երբեմն առանց գիշարկի: Շատերը փորհուրդ տւին Մարիային ամուսնացնել նրան, բայց իւանը լսել անգամ այց մասին չէր ուզում:

— Դա կը լինի մի տեսակ գերութիւն, պատասխանում է Մարիային: Այժմ ես ազատ կողակ եմ. ինչ որ կամենում եմ, այն անում եմ, ուր կամենամ կը զնամ. իսկ այն ժամանակ նստիր կնոջ պարեգոսի տակ. դու չը լինէիր այստեղ ես չէր ել ապրի:

— Իսկ դու ուր կը զնայիր, դժբաղդ, հարցնում էր Մարիան, որը, չ'նայած իր եղրօր արատներին՝ սիրում ու խղճում էր նրան:

— Ուր աշքերս տեսնում են: Հողը հօշիքով մի տեղ չի զարկւած: Հրէն, մեր ծերունի պապը, թափառում է ողջ աշխարհում:

— Պապը ուխտատեղերն է զնում: Նա սուրբ մարդ է, խիստ և ազդու կերպով պատասխանեց Մարիան:

— Ես այն ժամանակ բոլոր ուխտատեղիներն կը զնայի, որքան փող հաւաքէի: Ավտաւորներին ամեն բան տալիս ես: Ամրող աշխարհը կը շրջէի, իսկ ահա այստեղ սպասիր և հինգ կոպէկով գարշապար կարիր: — Այսպիսի խօսակցութիւներ յանափ էին տեղի ունենում ըրոջ ու եղրօր միջև. վերջապէս Մարիամը ձեռքը շարժեց նրա վրայ:

Ժամանակը անցնում էր: իւանը մտաւ քսան երեք տարու մէջ, Մարեան—քսան վեց: իւանը իւրաքանչիւր յարմար առիթին հարրում էր. Մարիան աշխատում էր՝ ձեռքերը չը ծալելով: իւր մասին նէ երբէք չէր մտածում: Մարդու զնալու մասին իսկի չէր ել մտածում: Նէրա ձեռքը

խնդրում էին որբեր ունեցող այրիները, սակայն ուրիշների մանուկների խնամատարութիւնը չէր հրապուրում աղջկանը, և աշխարհիս այն սահմանում, որի մէջ նէ ապրում էր, կուզէր մնալ ց'խորին ծերութիւն:

Երեան եկաւ Լիպկայում մի զինուր պանսակը մարդ, որը իր զինուրական ժառայութիւնը վերջացնելով եկել էր ըրոջ մօս՝ իր բացակայութեան ժամանակ մարդու տւած: Կը երեան գալով Լիպկայում սկսեց այնպիսի ուրախութիւն, քէֆ, որպիսին Լիպկայի երիտասարդութիւնը չէր տեսած մինչև ցայսօր: Թէ՛ երգեր երգելում, թէ հարմոնիայի վրայ նուագելու մէջ զերազանցում էր բոլոր զինուրներին, իսկ ժամփ էր տալիս այնպէս, որ Կ'ասես թէ գետինը ուացերի տակ պտտում է:

Մի անգամ երեկոյեան դուրս եկաւ խրճիթից և Մարիան՝ նայելու Մասկայի պանսակըրին: Մափ տւեց զինուրը հանգըստանալու խրճիթի մօս շինած նստարանի վրայ, ուր հաւաքւեց շինի ժողովուրդու: Այդ ժամանակ մօտեցաւ իւանը և խօսակցութեան մէջ մտաւ նրա հետ, որից զինուրը տեղեկացաւ, որ իւանը ցոյր ունի, որ նէ մօտ հարիւր բուրլի դրամ ունի, և իր հարազատ եղրօրը մի գրօշ անգամ չի տալիս, իր օժիտի համար է հաւաքում:

— Հապա էլ ինչո՞ւ չես ինձ հիւր կանչում ցեզ մօտ, հարցրեց նրան զինուրը:

— Գրոջ պէտք է հարցնել: Նէ դաժան է, խիստ է, և կեանց է վարում կրօնաւորական, իսկ ես՝ մեղաւոր մարդ եմ, խմել սիրում եմ... նէ կշտամբում է ինձ նրա համար որ ես զնում եմ և ուրիշ գիւղեր, ոտնամաններ կարկատում, և ինչ որ ձեռքս է ընկնում՝ քէֆի տալիս:

— Ինչո՞ւ հէջ մի անգամ փողոց չի դուրս գալիս ցոյրդ...:

— «Երեալ» չի սիրում և զարդարանը էլ չունի, իսկ մեզ մօտ պնւելը առաջի տեղն է բռնում: Հրէն նէ կանգնած է, և իւանը մատնացոյց արեց գէպի այն կողմը, ուր մինակ կանգնած էր աղջիկը. և միւս օրը երեկոյեան այդ առթիւ նէրա

Հետ խօսակցութեան մէջ մոռաւ : Դժնաւ հայեաց և խիստ դէպի իր անձը՝ Մարփիան սիրով չէր պատասխանում անծանօթ մարդու հարցերին և ընդունեց նրան միայն եղրօր ներկայութեամբ :

Հասաւ աշխատելու ժամանակը : Մարփիան աշխատում էր երկուսի տեղ, իւանը գնացել էր ուրիշների մարզագետինների խոտը հնձելու, որովհետեւ համագիւղացիները նրան չէին տանում աշխատանքի, ասենք զիւղում մալան էլ հաշիւ չէր նրան : Զիւնորը՝ իր բոլոր փողերը ծախսելուց յետոյ, այլ ևս նրան պատւել անկարող էր և պատրաստեց Մօսկվա վերադառնալու :

Հնձում էր Մարփիան հաճարը հեռու ակօսամիջում : Երեկոյացաւ, Արեգակը խոնարհեց՝ երկնակամարը հագցնելով կարմիր, ինչպէս ծիրանափայլ հրդեհ, լոյսով : Հնձում է Մարփիան շտապով, ընկնում է զիւնից աղլուվսը, երկար ծամը զզզուել է մէջքին, հնձում է, չը շտկւելով, և չի տեսնում, որ անտարից դուրս հկաւ զիւնուրը և ուղղւեց դէպի նէրա ակօսամիջը : Շիտկւեց Մարփիան, և պայծառ կարմիր գոյն ստացան նէրա թշերը : Արագութեամբ զիւնից զցեց աղլուվսը, վար զցեց շրջազգեսար (ՅՈՒԿԱ) և նորից շարունակեց աշխատել :

— Աստուած օգնական, Մարփիա Պետրովնա, — ասաց նա :

— Շնորհակալ եմ, — պատասխանեց Մարփիան, գործից չըյետ մալով :

Զիւնորը նատեց մի կոյս խուրձերի վրայ, որոնց թափւած էին Մարփիայի կողքին . նէ շտապով հնձում էր, նրա վրայ ուշադրութին չը դարձնելով :

— Դուք, կարծեմ, բարկանում էք ինձ վրայ, կամ չէք կամենում ինձ հետ խօսել, ասաց զիւնորը :

— Բարկանալու առիթ չ'կայ ձեր վրայ, իսկ խօսալու ժամանակ չունիմ, լրջութեամբ պատասխանեց Մարփիան :

— Կարելի է, ձեր հասարակութիւնից էք վախենում, դա աւելի քան տարօրինակ է : Դուք արդէն հասած աղջիկ էք,

ինողները չունից, նշանակում է, ձեր կամ ըին էք : Ինչո՞ւ ժամանակ չ'անցկացնել իր բաւականութեան համար :

— Բաւականութեան ժամանակը չէ, Ալէքսէի իւանովիչ... ինքներդ տեսնում էք. և խոտը ցաղելու, և հաճարը հասնելու ժամանակ է : Իս անձնական գործեր շատ ունիմ, դեռ ուրիշներից էլ վերցրել եմ :

— Անգութ սիրու ունիք գործ, Մարփիա Պետրովնա, հառաջեց զինուրը : Ես եկել եմ ձեզ ևս մի կարելոր գործի մասին խօսելու :

— Դուք ինչ գործ ունիք ինձ վերաբերեալ, — հարցրեց Մարփիան :

— Յանկանում եմ ամուսնանալ ձեզ հետ օրինաւոր պսակով, խօսը վեր վարեց, երկար չը մտածելով, Ալէքսէյը :

Մանգաղը ընկաւ Մարփիայի ձեռից : Լայն բացած աշքերով նայում էր Ալէքսէյի վրայ :

— Ինչո՞ւ այսպէս լուսմ էք, Մարփիա Պետրովնա, կամ՝ գուցէ, չէք հասկանում ինձ :

— Ես այլ կերպ չեմ հասկանում ձեր խօսքերը, բացի հեգնութիւնը, — վրայ բերեց Մարփիան : Դուք ընդամենը երկու շարաթ է, ինչ ճանաչում էք : Ես զեղեցիկ չեմ, պնազարդ ես չունիմ, ինչո՞վ եմ ես ձեզ դուր եկել...

— Ախ, Մարփիա Պետրովնա, մի՞թէ ինձ զեղեցկութիւնն է պէտք : Դուք համեստ, պարկեշտ աղջիկ էք, տնային, աշխատաւոր, էլ ինչ :

— Նշանեցէք, ով ինձանից աւելի փորը ու գեղեցիկ է, իսկ ինձ... թողէք :

— Մարփիա Պետրովնա, տաք ակսեց զինուրը : Անպիսի սէր եմ տածում զէսպի ձեզ, որ անուշ բնից ու կերակրից զրկուեցի : Արոշեցէք իմ բաղաը, թէ չէ ես կորսարի կը մատնեմ, կը զնամ կովկաս, կամ թիւրերի մէջ... — Սաստիկ բարախում էր Մարփիայի կուսական սիրարը, որը մինչև այժմ չէր լսած աղպիսի խօստավանութիւններ, իսկ զինուրը շարունակում էր խօսել իր ծրագիրների մա-

սին.... և խօսում էր այնպիսի պիերնա-  
խօսութեամբ և համոզեցուցիչ, որ Մա-  
րիան լսեց նրան, ինչպէս կը լսէր անա-  
պատականը շիկահաւ - թռչնիկին : Բայց  
և այնպէս զինորի խարուսիկ խոստում-  
ները չը խեղդեցին նէրա մէջ կարեկցու-  
թեան զգացումները գէպի իր դժբախտ եղ-  
րայրը :

— Եթէ ես համաձայնեմ ձեզ առնելու,  
ի՞նչ անենց այն ժամանակ իւանին, ամօթ-  
խածութեամբ հարցրեց նէ :

— Կ'ամուսնացնենք և կը թողնենք այս-  
տեղ տունը կառավարելու: Տնակը ես կար-  
գի կը բերեմ, հարսանիքին կ'օգնեմ և  
թող ապրի իր կոնջ հետ, իսկ մենք կ'անանց  
Մօնկվա:

— Ի՞նչու Մօնկվա:

— Ես աչքի առաջ ունիմ լւա պաշ-  
տոն այնտեղ, կը հաստատեմ, և այնտեղ  
« պատաւոր խնջոյցով » և մեր հարսա-  
նիքը....

Հարսանեաց հանդէսը կը կատարենք  
վերափոխման տանից յետոյ, եթէ միայն  
փող կը տան առաջուց. իսկ եթէ չ'տան,  
ստիպւած պիտի յետաձգել մինչեւ առա-  
ջիկայ ուտիքը :

— Իսկ ո՞րքան փող է կարկաւոր հար-  
սանիքին, - հարցրեց Մարիան :

— Պարտաւորական տասը սիրուն կար-  
միրներ, - ասաց Ալէքսէյը :

— Մարիան մտածմունքի մէջ ընկաւ...

— Ի՞նչու այդքան շատ, ասաց նէ :

— Ես շատ ծանօթներ ունիմ, նրանց  
միջոցով ես և տեղ կը ստանամ: Պէտք է  
բոլորին էլ հիւրասիրել, պատւել, իսկ լւա  
խնջոյց այդ փողով չէ կարելի սարցել...

— Ի՞նչ խնջոյց, միայն Աստուծոյ օ-  
րէնքով պսակւներ...

Մարիան կրկին խորասուցեց մտած-  
մունքի մէջ... նէրա մէջ աեզի ունէր  
կորի....

— Տեսնում եմ, Մարիա Պետրովնա,  
որ գուց կասկածում էք իմ վրայ. Աս-  
տուծած ձեզ հետ. կը զնամ կովկաս և  
այնտեղ կը զնեմ իմ անհանգիստ գլուխք:  
Մնաց բարեաւ, լինիք բաղդաւոր - և զին-

տորը գնաց միջասահմանով՝ առանց յետ  
նայելու...

— Ո՛չ, ո՛չ - նրա ետեից վագեց աղ-  
ջիկը, - հաւատում եմ քեզ, Ալէքսէյ, ո-  
չինչ քեզ համար չեմ ինայիլ, միայն ինձ  
մի խարիլ, մեղք կը լինի քեզ:

— Ահա հնարեց - կը խարեմ, միթէ  
վրա խաչ չ'կայ, մէկ էլ իսկ ինձ համար  
չեմ վերցնում, այլ հարսանիքի: —

Ուրախ, բաղդաւոր, երջանիկ, Մարիան  
զրկեց իր խօսնայրին, և նէրա զուրգուրած  
դրամները մտան զինորի գրանիք: Միւս  
օրը, առաւօտեան վաղ, նա գնաց երկա-  
թուղու կայարանը, խոստանալով գրել  
ամենակարճ ժամանակում, երբ Մարիան  
պէտք է ժամանէ Մօնկվա: —

Թրգմ. ԱԱՍՈՒԱԽԱՑՈՒՐ ԲԻԿ-ՑՈՎՅ.  
Շարայարելի



## Ա.Ն Ա.Ն Փ Ե

Զ.

Փառանձեմի և գնէլի ամուսնութիւնը  
օրուան դէպքն էր Հայաստանի մէջ, և  
նկատուեցաւ մեծ դէպք մը: Բոլոր պա-  
րագաներն ի նպաստ էին այս ամուսնու-  
թիւնը նշանակալից ընկելու: Պատկառուած  
ու չնասկցուած նախարար մը որ կը խը-  
նամենար մեծ սեպուէի մը հետ, հարուստ  
ու Հոռմայեցիներէ պաշտպանուած, այս  
միութիւնը կընար հաւասարակշռութիւնը  
կուրել ընկերութեան մէջ: Ու Հայաստա-  
նի մէկ ծայրէն միւսը կը խօսուէր այս  
ամուսնութեան վրայ ու կը մեկնուէր:

Նախարարները, մանաւանդ անոնց որ  
դիրքի ու ձկոտմներու տէր էին, հետե-  
ւանըներուն կը սպասէին այս դէպքին՝  
զոր կը նկատէին դիւնանգիտական: ի-  
րենց նախընարելի էր որ գնէլ դրացի  
աշխարհներէն մէկուն օրիորդը առած ըլ-  
լար, քան Միւնեաց կամ ուրիշ ո՛ւ և է  
մէկ նախարարութեան: Եւ իրենց մտքին  
մէջ մեծ սեպուն ուրիշ կերպով չէին կըր-